Հաստատում եմ
Ջրվեժի միջնակարգ դպրոցի
տնօրեն՝ _____ Լ.Վարդանյան
<<31>> _____ 2023թ.

ՋՐՎԵԺԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

VIգ դասարան

դասղեկ՝ Օթարյան Նատալյա

Դասարան ____6գ____
Դասարանի սովորողների թիվը՝ __33_____
տղա ____14_____
աղջիկ ___19____

Դասղեկի մանկավարժական գործունեության նպատակներն ու խնդիրները.

Դասղեկի գործունեության նպատակը սովորողների համար այնպիսի միջավայրի ապահովումն է, ուր հնարավորություն կունենան ինքնաբացահայտվելու զարգացնելու սեփական կարողությունները ու հմտությունները, ինչը կնպաստի նրանց որպես անհատ կայացմանը և հետագայում հասարակության մեջ արդյունավետ ինտեգրմանը: Թե՛ երկրի ներսում հասարակական – տնտեսական փոփոխությունները, թե ժամանակով պայմանավորված աշխարհում տեղի ունեցող այլ փոփոխություններ նոր պահանջներ են դնում ներկայիս հասարակության անդամների առջև: Դրանցից մրցակցայնությունը, ստեղծագործական մտածողությունը, կողմնորոշումը ոչ ստանդարտ իրավիճակներում և որոշումների կայացումը համագործակցությունը և բանակցելու հմտությունների տիրապետելը, մասնագիտական ճիշտ կողմնորոշումը նախաձեռնությունը և ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը, մտահոգությունը շրջակա միջավայրի հանդեպ, առողջ ապրելակերպին միտված կենսակերպը: Դասղեկի առջև դրված խնդիրներն են սովորողների մեջ քաղաքացիական պատասխանատվության և իրավական գիտակցության ձևավորումը, հայրենասիրական և հոգևոր դաստիարակությունը, նախաձեռնության, ինքնուրույնության, հանդուրժողականության խթանումը, ինչպես նաև հասարակության մեջ ինտեգրվելուն և աշխատանքի շուկայում կողմնորոշվել կարողանալուն նպաստելը:

Դասղեկի գործունեության հիմնական խնդիրները

- դասարանական կոլեկտիվի ձևավորումը
- անհատի ձևավորմանը նպաստող միջավայրի ապահովումը
- առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորումը
- սովորողների իրավունքներն ու շահերը պաշտպանելը
- դաստիարակչական գործունեության բազմազան միջոցներով արդյունավետ հարաբերությունների համակարգի ստեղծումը:
- դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպումը
- սովորողների, սովորողների և մանկավարժների միջև բարյացկամ, ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորում
- սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորումը
- սովորողներիի ստեղծագործական հասարակայնամետ գործունեության կազմակերպումը

Դասղեկի աշխատանքը պետք է ուղղված լինի հասարակական կյանքում հաստատությունում իրական խնդիրների հաղթահարմանը հաշվի առնելով

սովորողների անհատական առանձնահատկությունները և հասարակական կյանքում առկա դրական և բացասական միտումները:

Սովորողների հետ աշխատանքի ընթացքում դասղեկի գործառույթներին համապատասխան ընտրել հետևյալ եղանակները՝

- անհատական աշխատանք (զրույց, խորհրդատվություն, անհատական աջակցություն, խնդիրների լուծման համատեղ որոնումներ)
- խմբային (ստեղծագործական խմբեր, ինքնակառավարման մարմիններ)
- կոլեկտիվ (մրցույթներ, հանդեսներ, արշավներ)

Խնդիրների իրականացման արդյունավետության կարևորագույն պայման է մեթոդի ճիշտ ընտրությունը:

- Որպեսզի գիտելիքը լավ մարսես, այն պետք է հաճույքով կուլ տաս
- Որպեսզի հավատաս արժեքներին պետք է ինքդ հանգես դրանց կարևորությանը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

N	Աշխատանքի բնույթը	Նպատակն ու խնդիրները
1	Իրավական դաստիարակություն	Ձևավորել հարգանք օրենքի և պետականության նկատմամբ, հանդուրժողականություն և օրինապահություն, հասարակության մեջ իր իրավունքներն ու պարտականություններ գիտակցող քաղաքացի:
2	Ռազմահայրենասիրական դաստիարակություն	Սովորողի մոտ սերմանել սեր և հարգանք հայրենի երկրի, նրա մշակույթի, պատմության նկատմամբ, դաստիարակել պատասխանատվություն երկրի ներկայի և ապագայի հանդեպ, ձևավորել հայրենիքի պաշտպանի գիտակցություն:
3	Հոգևոր դաստիարակություն	Նպաստել սովորողների հոգևոր դաստիարակությանը, սերմանել սեր ու հարգանք քրիստոնեության նկատմամբ, դաստիարակել քրիստոնեավայել վարք ու բարի և հոգեկերտվածք ու սեր մեր մերձավորի նկատմամբ:
4	Գեղագիտական դաստիարակություն	Գեղագիտական գիտակցության և ճաշակի ձևավորում գեղեցիկի, արվեստի մասին գիտելիքների փոխանցում, շրջապատող իրականության գեղագիտական վերաբերմունքի, գեղագիտական գնահատականի, մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում:
5	Ֆիզիկական դաստիարակություն	Սովորողների ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտությունների ձևավորում: Սովորողների կենսականորեն կարևոր շարժական

		հմտությունների և ունակությունների անհրաժեշտ մակարդակի ձևավորում, բարձր կամային որակների ձևավորում:
6	Աշխատանքային դաստիարակություն	• Աշխատանքի նկատմամբ սիրո և պատասխանատվության ձևավորում • Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում և աշխատանքի միջոցով բարոյակամային հատկանիշների ձևավորում • Ձևավել հարգանք տարբեր մասնագիտությունների հանդեպ, աջակցել մասնագիտական կողմնորոշման հարցում:
7	Բնապահպանական դաստիարակություն	Ձևավորել գթասրտություն, հոգատար վերաբերմունք և պատասխանատվություն բնության, շրջակա միջավարի և երկիր մոլորակի հանդեպ:

Սովորողի մասնակցությունը նախասիրական գեղարվեստական, երաժշտական և այլ խմբակների

N	Ազգանուն, անուն	խմբակ	վայրը
1	Արզումանյան Լալա	մարմնամարզություն	Մարզարվեստի դպրոց
2	Բաքոյան Քրիստինե	ասեղնագործություն	Կաթողիկե եկեղեցի
3	Եփրեմյան Լիլիթ	Տեխնոլոգիայի խմբակ	Զրվեժի մ/դ
4	Կախյան Անահիտ	Տեխնոլոգիայի խմբակ	Զրվեժի մ/դ
5	Հակոբջանյան Անգելինա	Մարմնամարզություն Տեխնլոգիայի խմբակ	Մարզարվեստի դպրոց Զրվեժի մ/դ
6	Հարությունյան Անահիտ	Մարմնամարզություն Տեխնլոգիայի խմբակ	Մարզարվեստի դպրոց Զրվեժի մ/դ
7	Մարգարյան Դիանա	պար	Աղաջանյանների պարի դպրոց
8	Մարտիրոսյան Գոհարիկ	Տեխնոլոգիայի խմբակ	Զրվեժի մ/դ
9	Պողոսյան Մարգարիտա	Տեխնոլոգիայի խմբակ	Զրվեժի մ/դ
10	Սահակյան Մարիա	Տեխնոլոգիայի խմբակ	Զրվեժի մ/դ
11	Հայրապետյան Մանե	Տեխնոլոգիայի խմբակ	Զրվեժի մ/դ
12	Դոխոյան Լևոն	Հունահռոմեական ըմբշամարտ	Մարզադպրոց

13	Երզնկյան Վարդան	Հունահռոմեական ըմբշամարտ	Մարզադպրոց
14	Երվանդյան Գոռ	Բարբա, լող	Ակվատեկ կոմպլեքս
15	Կոստոյան Հովիկ	Շվի	Ասլամազյանի եր. Դպրոց «Արմաթ» լաբորատորիա
16	Հովհաննիսյան Սամվել	շախմատ	Ջրվեժի մ/դ
17	Մարգարյան Արման	Սամբո, դյուդո	Լ. Հայրապետյանի անվան դպրոց
18	Մարտիրոսյան Արտյոմ	թեկվոնդո	«Տորք Անգեղ» համալիր
19	Մուսիկյան Սարո	ֆուտբոլ	«Արարատ» ֆուտբոլի ակումբ
20	Օհանյան Արեգ	ըմբշամարտ	Ռ. Կարապետյանի դպրոց

Մանկավարժական գործառույթները

Գործառույթները	Նպատակներն ու խնդիրները	Ուղղվածությունը
1. Դասարանում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպում	1. Իրականացնել վերահսկողություն սովորողների առաջադիմության և կարգապահության նկատմամբ: • Միավորել դասավանդող ուսուցիչների ջանքները սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացը իրականացնելու համար: • Բացահայտել դասարանի սովորողների հաջողությունները և դժվարությունները, ի հայտ բերել հետ մնացող աշակերտներին, կազմակերպել նրանց օգնություն:	1. Կատարել ուսումնասիրություն սովորողների ընտանեկան դրության, սոցիալական կարգավիճակի, առողջական, հոգեբանական խնդիրների, նախասիրությունների, կարողությունների, հմտությունների և կամային հատկանիշների մասին: • Դիտարկումների և դասալսումների ընթացքում կուտակված նյութը վերլուծել դասավանդող ուսուցիչների, ծնողների և աշակերտների հետ, խնդիրները հաղթահարելու և համապատասխան որոշում կայացնելու և աշակերտների ուսումնական առաջընթացը ապահովելու նպատակով:

2. Կազմակերպչական գործառույթ (իրականացնել դասարանի համար սահմանված գործավարություն, էլեկտրոնային գրանցումներ, տնօրինությանը ներկայացնել սովորողներ առաջադիմության, հաճախումների վարքի, կրթության առանձնահատուկ պայմանների տարիք ունեցող սովորողների մասին տեղեկություններ:	2.Ապահովել սովորողների հաճախումների, վարքին ու առաջադիմությանը ներկայացվող դպրոցական պահանջների կատարողականը: • Ծրագրել սովորողների բազմաբնույթ գործունեությունը՝ ճանաչողական, աշխատանքային, գեղագիտական, ինչպես նաև դպրոցական ժամանցի կազմակերպումը • Կանոնակարգել ներդասարանական փոխհարաբերությունները, խթանել առաջնորդության դրսևորումները, ձևավորել աշխատասիրություն, պատասխանատվություն, փոխօգնության, համագործակցության ոգի:	2.Սովորողների առաջադիմությանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումների կազմակերպում՝ դասղեկի ժամեր, դասալսումներ, մրցույթներ, նպատակային արտադասարանական միջոցառումներ, էքսկուրսիաներ, շրջագայություններ:
Գործառույթները	**Նպատակներն ու խնդիրները**	**Ուղղվածությունը**
3.Սովորողների վարքի, հաճախումների վերահսկողություն	3.Ղեկավարել դասարանի կարգ ու կանոնը, սովորողների վարքը դպրոցում և դպրոցից դուրս: • Բացահայտել վարքի կանոնները խախտած և հաճախակի բացակայող սովորողներին, նրանց հետ համապատասխան աշխատանք իրականացնելու նպատակով:	3.Հետևել սովորողների հաճախելիությանը և կարգապահությանը • Հոգեբանի հետ համատեղ աշխատել խնդրահարույց սովորողների վարքը կարգավորելու համար: • Անհաջողության դեպքում դիմել մանկավարժական խորհրդի և տնօրինությանը համապատասխան օժանդակություն ստանալու համար: • Դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկման ներկայացնել սովորողի խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:
4.Աշխատանք մանկավարժահոգեբանական կարողությունների զարգացման ուղղությամբ:	4.Անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժ բացահայտող միջավայրի ապահովում:	4.Ցուցաբերել հարգանք սովորողի անհատական հնարավորությունների նկատմամբ: • Ստեղծել բավարար պայմաններ և

		հնարավորություն, ընձեռնել առողջ քննադատություն հնչեցնելու և կարծիքների ազատ փոխանակումը իրականացնելու համար:
5.Մասնակցություն սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը և անհատական ուսուցման պլանի մշակմանը, դրանց ապահովմանը:	5.Աջակցել յուրաքանչյուր աշակերտի՝ որպես անհատի ձևավորմանը	5.Դասարանում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ստեղծում և ապահովում:
6. Պլանավորման ծրագրավորման գործառույթ. կանոնակարգում է մանկավարժական գործունեությունը, հեշտացնում արդյունքների հետևողական վերահսկումը:	6. Համակարգված աշխատանքային պլանների կազմում, դասղեկի և դասարանի արդյունավետ գործունեությունը ապահովելու նպատակով:	6.Պլանավորել իր մասնագիտական գործունեությունը, մշակելով դասղեկի աշխատանքային տարեկան պլանը:
Գործառույթները	**Նպատակներն ու խնդիրները**	**Ուղղվածությունը**
7.Ախտորոշման գործառույթ, որը ենթադրում է ելակետային մակարդակի վերահանում և շարունակական համեմատության մեջ փոփոխությունների արձանագրում:	7.Հետազոտել երեխայի անձը և անհատականությունը թափանցելով նրա ներաշխարհը և ըմբռնել նրա ապրումների ու վարքի մոտիվները և առանձին աշակերտի վրա դաստիարակչական ներգործության ավելի արդյունավետ ձևեր ու մեթոդներ գտնելու համար: • Ձևավորել կոլեկտիվ ստեղծագործական գործունեություն և կիրառել այն ինչպես կրթական գործունեության մեջ, այնպես էլ դրանից դուրս:	7.Հետևել սովորողի վարքին և գործունեությանը դիտարկելով նրա դասերի ժամանակ, հանրօգուտ աշխատանքում հասարակական հանձնարարություններ կատարելիս և հանգստի ժամանակ վերլուծել ու կանխատեսել իր գործունեության արդյունքները • Հոգ տանել դասարանի յուրաքանչյուր աշակերտի մասին, անհրաժեշտության դեպում սովորողի համար կազմակերպել ուսումնական օգնություն:
8. Սովորողների առողջության ֆիզիկական զարգացման ապահովում	8. Առողջ ապրելակերպի վարքագծի և վնասակար սովորությունների դեմ բացասական վերաբերմունքի ձևավորում	8. Կազմակերպել սովորողների առողջության ամրապնդման ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ:

9.Աշակերտի սոցիալական պաշտպանության գործառույթ	9.Դաստիարակել հարգանք պետության նկատմամբ, սեր և պատասխանատվություն երկրի և մարդկանց նկատմամբ • Ձևավորել քաղաքացիական ակտիվ դիրքորոշում • Լուծել հնարավոր խնդիրները ա)խմբավորում ընդդեմ խմբավորման բ)աշակերտն ընդդեմ աշակերտի գ)խմբավորումն ընդդեմ աշակերտի • Կատարել վերլուծություն սովորողների միջանձնային հարաբերությունների վերաբերյալ համակարգել կազմակերպել զրույցներ միջանձնային հարաբերությունների կարգավորման համատեղ որոշումներ կայացնելու նպատակով	9.Ծանոթանալ սովորողների անձնական գործերի բնակարանային կենցաղային և բարոյահոգեբանական պայմաններին, ընտանեկան վիճակին դժվարին իրավիճակում հայտնված սովորողի • Ընտանքի և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնել հաստատության տնօրենին, սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների համայնքապետարանի սոցաշխատողի և այլ կազմակերպությունների հետ: • Քաղաքացիական ակտիվության պատասխանատվության , արժանապատվության , կոլեկտիվիզմի համագործակցության հանդուրժողականության և ներողամտության ձևավորում, դասեր նվիրված երկրին, քաղաքին, գյուղին:
Գործառույթները	**Նպատակներն ու խնդիրները**	**Ուղղվածությունը**
10. Աշակերտական ինքնակառավարման գործառույթ, որը երաշխավորում է նրանց ինքնուրույնության խթանումը	10.Խթանել սովորողների իրավական գիտակցություն, կոլեկտիվ գործունեության կազմակերպումը ինքնակառավարման միջոցով • Երաշխավորել սվորողների ինքնուրույնությունը: • Ձևավորել ինքնակազմակերպվածություն, պատասխանատվություն, ընդհանուր գործին • Խթանել սովորողների ստեղծագործական կարողությունները, կազմակերպչական հմտությունները, որոշում կայացնելու ունակությունը հասարակական նշանակության նպատակների իրականացման համար որոշումներ կայացնելու և դրանք իրագործելիս:	10. Տալ սովորողին ավելի շատ ինքնուրույնության և ընտրելու իրավունք և դասարանական խորհրդի ձևավորում: • Ձևավորել առաջացող դժվարությունները հաղթահարելու կարողություն • Քաջալերել սովորողների ինքնուրույն նախաձեռնությունները աջակցել դրանց իրականացմանը • Բացահայտել յուրաքանչյուրի ներուժը և կիրառել:
11.Համագործակցություն մանկավարժական աշխատողների հետ	• 11.Համագործակցությունը ուսուցիչների հետ ապահովում է միասնական մոտեցում դասարանում առկա խնդիրների	11. Կամակերպել դասալսումներ սովորողների ուսման նկատմամբ վերաբերմունքը բացահայտելու, պարզելու

	լուծման համար, ուսուցիչների հետ գալու համաձայնության արդի պայմաններում դաստիարակության նպատակների, արժեքների, բովանդակության հարցում, դասարանի և առանձին վերցրած աշակերտների սոցիալ հոգեբանական հարցերի շուրջ ուսումնադաստիարակչական գործընթացում կիրառվող ձևերի, մեթոդների և միջոցների մեջ: Մասնագիտական գործունեության համատեղ քննարկումներ դասարանում իրավիճակի մասին, տեղեկատվության փոխանակում, հոգեբանական միկրոմիջավայրի կարևորում, ինքնակրթության և փորձի փոխանակում	սովորողների այս կամ այն առարկայից ետ մնալու իր ընդունակություններին համապատասխան առաջադիմություն ցուցաբերելու փաստը , պարզելու վերը նշված դժվարությունների կապը ուսուցչի դասավանդման սկզբունքների հետ: Ուսուցիչների մոտ ակտուալ դարձնել մանկավարժական մոտեցումները, բարձրացնել նրանց մասնագիտական որակը: • Զրուցել դասավանդող ուսուցիչների հետ հասկանալու համար աշակերտի դժվարությունների պատճառը, հաշվի առնելով նրանց կարծիքները որոշել իր և ծնողի անելիքը առաջացած դժվարու-թյունները հաղթահարելու ուղիները գտնելու: • Առարկայական ուսուցիչների հետ խորհրդակցելով կազմա- կերպել մրցույթներ, բաց դասեր, նպատակային էքսկուրսիաներ, կինոդիտումներ:
Գործառույթները	**Նպատակներն ու խնդիրները**	**Ուղղվածությունը**
12. Ծնողների հետ աշխատանքի իրականացում	• Ծնողներին ծանոթացնել սովորողների նկատմամբ դպրոցի պահանջներին, նպաստել սովորողների նկատմամբ դպրոցի կողմից մանկավարժական պահանջների կատարմանը, ապահովման աշխատանքներում ընտանիքի մասնակցությունը, ապահովելու սովորեղների նկատմամբ դպրոցի և ընտանքիի մանկավարժական պահանջների միասնականությունը: Ներկայացնել ծնողներին պետական չափորոշիչների համապատասխան սովորողներին ներկայացվող պահանջները և առաջարկել ուղիներ անհամապատասխանությունները վերացնելու համար:	12.Ծնողների օգնությամբ ծանոթանալ սովորողի բնավորությանը ունակություններին և ձիրքերին: Իրականացնել անհատական աշխատանք, նրանց հետ քննարկել մտահոգությունները, որոշել ընտանքի դերը դժվարությունների մեջ: • Բարձրացնել ծնողների հոգեբանակամանկավարժական ուղղվածությունը, կազմակերպելով հանդիպումներ, զրույցներ, ժողովներ, քննարկումներ սովորողների դաստիարակության հարցերի շուրջ դպրոցական կյանքին վերաբերող խնդիրների շուրջ և դաստիարակության հարցերում կայացնել համատեղ որոշումներ:

	• Ապահովել արտադասարանական աշխատանքներին ծնողների ներգրավվածությունը:	• Ապահովել ծնող-դպրոց համագործակցությունը:
13.Սովորողների հետ արտադասարանական դաստիարակչական աշխատանքի կազմակերպում	13.Բարելավել ուսումնական գործընթացը, միջանձնային հարաբերությունները • Զնավորել սովորողների արժեքային համակարգը բարոյական արժեքներ և համագործակցային հմտություններ • Մշակել վարքի կուլտուրա • Խթանել ստեղծագործական կարողությունները բացահայտել անհատական կարողությունները, տալ ինքնադրսևորման հնարավորություն:	13.Զարգացնել սովորողների ճանաչողական հետաքրքրությունները կազմակերպելով տարբեր արտադասարանական միջոցառումներ (ուսումնական բարոյագիտական, գիտաճանաչողական, հանրօգուտ) կազմակերպել էքսկուրսիաներ պատմական հուշարձաններ, տեսարժան վայրեր, թանգարաններ, թատրոններ, կինոթատրոններ, ցուցահանդեսներ):

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրությունը

Ուսումնական տարվա սկզբին

- Կազմել աշակերտների ցուցակը
- Դասասենյակը նախապատրաստել նոր ուսումնական տարվան
- Կազմակերպել դասագրքի ստացումը գրադարանից.
- Վերստուգել կամ պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը
- Ներգրավել սովորողներին խմբակներում
- Հավաքել սպառիչ տեղեկություններ՝ լրացուցիչ կրթության հաստատություններում դասարանի աշակերտների մասնակցության մասին
- Կազմակերպել դասագրքերի վճարումը
- Սովորողների հետ համատեղ կազմակերպել դասարանի կենսագործունեության պլան
- Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլան
- Կազմակերպել ծնողական, աշակերտական խորհրդի անդամի ընտրություն

Ամենօրյա աշխատանք

- Հետևել դասարանի հաճախումներին
- Հետևել սովորողների արտաքին տեսքի պատշաճությանը, հետևել դասարանի սնվելուն և բարեկիրթ վարքին

- Հետևել դասարանի մաքրությանը
- Հետևել դասարանում հերթապահության կազմակերպմանը
- Մանկավարժական օգնություն ցույց տալ դասարանական և դպրոցական ինքնավարության օղակներին:

Ամեն շաբաթյա աշխատանք

- Հետևել սովորողների առաջադիմությանը
- Էլեկտրոնային մատյանի վարման վերահսկողություն
- Դասղեկական ժամի վարում
- Դպրոցի, դասարանի վերահսկողության հանձնված տարածքի մաքրության վերահսկում
- Այլ պլանավորված աշխատանքների կատարում

Ամենամսյա աշխատանք

- Դասարանի կոլեկտիվը նախապատրաստել, կազմակերպել համադպրոցական գործընթացներին մասնակցելու համար
- Կազմակերպել դասարանին հատկացված տարածքի ամենամսյա մաքրում
- Հերթապահել համադպրոցական միջոցառման ժամանակ ըստ հերթապահության գրաֆիկի
- Վերահսկել դասարանի աշակերտների մասնակցությունը խմբակներում, ակումբներում, խորհուրդներում:

Ուսումնական կիսամյակի ընթացքում

- Հետևել դասագրքերի պահպանմանը
- Վարել մանկավարժական խորհրդատվություն
- Վարել ծնողական ժողովներ
- Մասնակցել դասղեկական խորհրդակցություններին
- Կազմակերպել ծնողխորհրդի աշխատանքները համաձայն վերջինիս պլանի
- Կազմակերևպել կիսամյակին դասարանի կրթադաստիարակչական գործունեության արդյունքների ամփոփում:
- Ներկայացնել հաշվետվություն դասարանի առաջադիմության մասին հաստատության ուսումնական գծով տնօրենի տեղակալին:

Ուսումնական տարվա վերջում

- Կատարել դասարանի կրթադաստիարակչական աշխատանքների վերլուծություն և կազմել հաշվետվություն և հանձնել հաստատության մասնագիտական կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալին
- Կազմակերպել դասագրքերի հանձնումը գրադարան
- Կազմակերպել դասարանը նորոգելու, ներկելու աշխատանքները
- Կազմակերպել տարեվերջյան էքսկուրսիաներ

- Սովորողների ծնողներից տեղեկություններ հավաքել նրանց ամառային հանգստի մասին:

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Գիտելիքի օր
2. Խաչքար, հայտնի խաչքարեր
3. Ճանաչիր քո հայրենիքը
4. Մեծերը և փոքրերը
5. Կարմիր գիրք
6. Պասիվ ծխելու հետևանքները
7. Պատմական կրթօջախներ՝ Գևորգյան ճեմարան
8. Անտիկ աշխարհի հրաշալիքները
9. Հայոց մայրաքաղաքները
10. Եզովպոս, առակները
11. Խոսելու կուլտուրա
12. Հայ երգարվեստ՝ գուսանական երգեր
13. Միջնադարյան հրաշալիքներ
14. Երկնապլաց լեռներ
15. Կամք և կամային հատկանիշներ
16. Գլոբալ տաքացում
17. Մեծ բարերարներ՝ Քըրք Քրքորյան
18. Հայ զորավարական փառքի պատմությունից
19. Ի՞նչ է ընկերությունը
20. Ինտերնետ կախվածություն
21. Մեր տոները
22. Խոսքի մշակույթը
23. Վարդանանց հավերժության խորհուրդը
24. Պահպանենք բնությունը
25. Չարենցի պատգամը
26. Լինենք բարեկիրթ
27. Ինչ գիտենք մեր մոլորակի մասին
28. Երուսաղեմ
29. Խոնարհվի՛ր գրքին, որ շատ բարձրանաս…
30. Հայկական սփյուռք
31. Կոլեկտիվ աշխատանք
32. Հարսանիք լեռներում (Շուշի)
33. Մեր ընտանիքը
34. Հայաստանի 3 հանրապետությունները